

ERM0623

23

ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ՄԵԾԱԳՈՅՆ
ԲԱՐԵՐԱՐՆԵՐԷՆ ՄԻՆ

Ս. ԴՈՄԻՆԻԿՈՍ ՏԸ ԿԻՒՍՄԱՆ

Գրեց ՆԵՐՍԷՍ ՅՈՎՍԷՓ. Վ. ՓԱՓԱՋԵԱՆ

« Ո՛չ բաղձանք խաղաղութեան
և ո՛չ սպանալիք պատերազմի զմեզ
սպան չեն կացուցաներ մեր պար-
տականութիւններէն հանդէպ ճշ-
մարտութեան » :

ԼՈՒԴՎԻԿՈՍ ՎԵՅՅԵՆՑ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Ե. Մ. ՍԵՓԵԱՆ
1834

Setyan

ԱՌ ԲԱՐԵՊԱՃՏ ԵՒ ԲԱՐԵՍԷՐ ԱՆՁՆ

ԱԶՆՈՒԱՇՈՒՔ ՅՈՎՍԷՓ ԷՖ. ՅԱԿՈԲԵԱՆ

Տրկարացումն հաւատոյ մեծ տրտմութեամբ կը տեսնէք,

Բայց երբ գովուին բեմերէ վատաբարոյք եւ դժնէք,
Երբ պաշտօնեայք խորանին պարտուց ուղին ցոյց չեն տար՝

Ժողովրդոց բարւոքման չըլինելով հոգատար,
Ո՛հ, այն ատեն անպատում վշտերու մէջ է թաղուած՝
Նոր աղիտից երկիւղիւ՝ Ձեր սիրտն ազնիւ դիւրազգած :
Դուք ո՛չ շահու հետամուտ, եւ ո՛չ փառքի տենչացող,
Կը փափաքիք որ յաւէտ յիսուսաւանդ լոյսն ու ցօղ,
Բեղնաւորեն սրբաճոխ անդն ու պարտէզ Ձեր հոգւոյն :
Ճշմարտութեան արեւուն խնկարկունիւ մշտարթուն՝
Ո՛չ են սիւներ ապարէն, որովք կանգնին ցեղ եւ տուն :
Երկնից վըսեմ ճոխութեանց ի զո՛ւր բացուած են
գանձեր,

Մահկանացուք երբ տըխուր կիրքերն իրենց չեն սանձեր,

Ձրկին բախտէն լինելու վիճակակից զըւարթնոց,



Բղխէ երկիրն ալ թոյն՝ ատելութեան զերթ հընոց,
 Խաղաղութեան եւ սիրոյ բառերն անշուշտ դեռ լսուին,
 Քայց չեն թողուր ո՛չ մի հետք ինչպէս փոշի մը հովին:
 Սակայն Աստուած գըթալով վշտաչարչար մարդկու-
 թեան,

Հաճի առնուլիսկ գործիք՝ շիրիմներէն անկենդան,
 Քառսէն կարգ յօրինէ, դաշնակութիւն աղմուկէն,
 Չարը՝ բարւոյ տիրաբար, փոխէ սիրոյ ոխն ու քէն:
 Անոր կամաց պաշտելի ո՛վ յանդգնի գու խափան,
 Հըրամանաց գործադրող են բիւրք բիւրուց սըր-
 բարան:

Դոմինիկոս վեհաշունչ, եւ Քարոզիչք անձնուրաց,
 Քարիքն իրենց լուսայորդ մինչեւ Հայոց եւ Վրաց՝
 Տարածելով մըտադիւր ժողովրդոց, կըղերին,
 Ըստ բաղձանաց Ձեր հոգւոյն, շունչ մը դրա՛խտէն
 մեզ բերին:

Հետեւելով մենք անոնց իտէալին գերագանց,
 Նախանձելի՛ անուռն Հայ ընենք դարուց եւ ազանց:

Ն. Յ. Վ. Փ.

ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ՄԵԾԱԳՈՅՆ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԷՆ ՄԻՆ

Ս. ԴՈՄԻՆԻԿՈՍ ՏԸ ԿԻՒՍՄԱՆ

Հին և նոր սուրբերու մէջ եթէ կայ մին որ ամենէն աւելի օգտակար եղած է մարդկութեան, և որոյ կեանքն ամբողջ «սիրոյ ներգործութիւն մը եղած է յարատե», այն ալ Քարոզիչ Եղբարց հիմնադիրն է անշուշտ: Կ'արժէ որ տեսնենք գէթ համառօտիւ իւր հոգւոյն երկնային գեղեցկութիւնը՝ ինչպէս և իւր գործոց ճոխութիւնն ու շքեղութիւնն անզուգական:

Ա.

Դոմինիկոս ծնաւ 1170ին ի Սպանիա, հին Գաւղիլայի քաղաքներէն միոյն մէջ, որ կը կոչուի Գալսորա: Իւր հայրն էր Փելիքս Կիւսման, որ կը սերէր Բրիտանիոյ դուքսերէն, որոնք յընթացս դարուց՝ խընամութիւն ունեցան Սպանիոյ և Բորգուկալի արքայից հետ: Մայրը կը կոչուէր Յովհաննէս, Աղայի նշանաւոր ասպետներու սերունդէն: 1318էն ի վեր իւր տապանագրին մէջ նշանակուած է Սրբուհի բառը, հա-

ւանօրէն ժողովրդին ձայնով և ո՛չ Գերագոյն Քահանայապետին վճիռով :

Այս երջանիկ ծնողք ուրիշ զաւակներ եւս ունեցած են. առաջինն է Անտոն, որ քահանայ ձեռնադրուեցաւ, և իւր հարստութիւնն աղքատաց բաժնելով, իրեն բնակութիւն ընտրեց հիւանդանոց մը, ուր հոգեւոր և մարմնաւոր ծառայութիւններ մատուցանելով տառապելոց, քրիստոնէական բարձր առաքինութիւններով փայլեցաւ, և յետ մահու հրաշքներ անգամ գործնելու կարող եղաւ : Երկրորդն էր Մանէս, որ կրօնաւորութիւն ընտրեց իւր եղբօր հիմնած Միաբանութեան մէջ, ուր անսողիւտ վարուք և հոգելից քարոզութեամբ՝ յարգելի եղաւ ամենուն : Երրորդ որդւոյն անվտանգ ծննդեան համար, մայրը Սիլուսեան Ս. Դոմինիկոսի եկեղեցւոյն մէջ կատարեց իննօրեայ ջերմեռանդութիւն մը որ չէր աւարտած տակաւին, երբ Երանելի Արքայն անոր երեւցաւ կրօնաւորի զգեստովն ու երկնային պայծառութեամբ, և ըսաւ թէ իւր ապագայ որդին սրբութեամբ և վարդապետութեամբ պիտի լուսաւորէր բոլոր աշխարհ, և պիտի մխիթարէր Եկեղեցին Քրիստոսի : Ուրիշ անգամ մը երազ տեսաւ, յորում կը թուէր իրեն կրել իւր որովայնին մէջ փոքրիկ շնիկ մը, բերանը բռնած ջահ մը որ հուր կը ժայթքէր աշխարհի չորս կողմը : Խորհրդանշան մըն էր այս, որ կը գուշակէր թէ այդ զաւակը պիտի գոռար մի օր ընդդէմ վրիպանաց և մոլութեանց, բոլոր թաշաւորութիւնները պիտի լուսաւորէր իր պայծառութեամբ, և սիրոյ կրակը պիտի վառէր վերստին անհաւից և ժողովրդոց սրտերուն մէջ :

Ըստ աւանդութեան ուրիշներ տեսան նաև նորածին մանկան ճակատը աստղ մը, որ իւր լոյսով կը գե-

բացանցէր երկնից բոլոր աստղերը, և իւր ճառագայթները կը սփռէր ընդհանուր երկրի վրայ: Օր մըն ալ Ս. Պատարագի ժամանակ քահանայն փոխանակ ըսելու «Խաղաղութիւն ընդ ձեզ»՝ մանկան դառնալով կըրկնեց երկնային ներշնչութեամբ. «Ահա Բարեկարգիչն Եկեղեցւոյ»:

Դէպքերը պիտի չուշանան արդարացնելու բոլոր այս բարեգուշակութիւնները: Երախային վրայ միայն տարիքն ու հասակն էին մանկական: Ամենէն լուրջ ծերունւոյն հետ կրնար մրցիլ իւր համեստութեամբ, ծանրաբարոյ խոնարհութեամբ և ժուժկալութեամբ: Շատ կանուխէն մասնաւոր հակամիտութիւն ցոյց տըլաւ մարմնաւոր մահացուցմանց, գիշերներն իսկ աղօթքի ելնելով և գետնախշտի լինելով յաճախ: Իւր առաջին կրթութիւնն ստացաւ բաց ի ծնողքէն, աւագերէց հօրեղբօր մը ձեռամբ, որ սիրով նուիրեց անոր իւր ժամերն՝ Աստուծոյ մեծ ծառայ մը պատրաստելու վստահութեամբ:

Տասնեւչորս տարեկան սկսաւ յաճախել Բալենսիայի Համալսարանը: Աստուածաշունչ գրոց և Սրբազան Հարց ծանօթութեան միացուց ճարտասանութիւն, իմաստասիրութիւն և աստուածաբանութիւն: Վեց տարի նուիրեց այս ուսմանց մեծ յաջողութեամբ, առանց իւր հոգեւոր կրթութիւններէն բան մը պակսեցնելու, որոնց մէջ գերբնական լոյսեր կ'ընդունէր իրեն և այլոց համար: Կը սիրէր մանաւանդ լուութիւն և մենութիւն, որք սուրբերու երկու մեծ ոյժերն եղած են միշտ: Կը խորշեր յուր ընկերներէ և աւելորդ այցելութիւններէ, երկու մեծ վտանգներն անխոհեմներու և աշխարհասէրներու, որք հոն կը կորսնցնեն անմեղութիւն և բարեպաշտութիւն: Յետին աստիճան նա-

խանձախնդիր էր հրեշտակային մաքրութեան, զոր անվըթար պահելու համար ամեն միջոց կը գործածէր, ինչպէս խոնարհութիւն, ժուժկայութիւն, մահացուցում, և մանաւանդ սէր գործովալիր առ Ս. Աստուածածին, որ կը կոչուի «Կոյս կուսանաց և Թագուհի ողջախոհութեան»:

Իւր ամբողջ կեանքին մէջ գթալիր կարեկցութիւն մը զգաց միշտ ամեն տեսակ վշտակիրներու հանդէպ: 1191ին երբ սաստիկ սով մը կը սպառնար աւերակ դարձնել Եւրոպան, ի նպաստ կարօտելոց վաճառեց իւր կարասիները, և նոյն իսկ իւր գիրքերը, ինչ որ չնչին զոհողութիւն մը չէր իրեն պէս ընթերցասէր և ուսումնասէնչ երիտասարդի մը համար: Իւր օրինակին հետեւելով քաղաքին ամենէն հարուստները բացին իրենց սրտին հետ արկղերն ու շտեմարանները: Իւր անեզր գութն ու աղքատասիրութիւն հանրածանօթ ըլլալով, կին մը եկաւ արտասուելից՝ ողորմութիւն խնդրել իրմէ վճարելու համար փրկանքը իւր եղբօր զոր գերի ըրած էին Մաւրիտանացիք: «Ոսկի և արծաթ չունիմ, բայց մի՛ վհատիր, աշխատիլ կրնամ: Զիս առաջարկէ՛ Մաւրիտանացուց եղբօրդ փոխարէն. կ'ուզեմ գերի ըլլալ իւր տեղը»: Խեղճը զարմացած, չհամարձակեցաւ ընդունիլ. բայց հրեշտակաց ձեռքերը արձանագրեցին կենաց մատենին մէջ Դոմինիկոսի վարուց գեղեցկագոյն դրուագներէն մին:

Իսկ ի՞նչ ըսել իւր կարեկցութեան մասին, երբ կարօտութիւնք հոգեւոր էին: Ամենէն դժնդակ ապաշխարութեանց առջև չէր ընկրկէր երբեք, և կը նուիրէր ինքզինքն աստուածային արդարութեան խստութեանց՝ մեղաւորներու դարձին համար: Ու այս այն աստիճան որ խօթացաւ մերձ ի մահ, որմէ ազատեցաւ Սպանիոյ

Առաքելոյն Ս. Յակոբայ հրաշալի բարեխօսութեամբ :
 Գործածեց նաև իւր երկնապարզև պերճախօսու-
 թիւն հոգիները մեղքէ և ունայնութիւններէ հեռացը-
 նելու և Աստուծոյ մօտեցնելու համար : Երիտասարդ
 իշխան մը Գոնրա էթինոն, իւր յորդորներէն ազդուած,
 հրաժարեցաւ հաճոյքներէ և պատիւներէ, և եղաւ Սի-
 դոյի կրօնաւորներէն . անձնական արժանիքը միացեալ
 տոհմային ազնուականութեան բարձրացուցին զայն տը-
 բայի, և յետոյ եպիսկոպոսի ու կարդինալի աստիճան-
 ներուն :

Բ.

Հակառակ իր չքնաղ համեստութեան, Գոմինիկո-
 սի քաջակորով իմացականութիւնն, ուղղամիտ դատու-
 ղութիւնը և հմտութիւնը խորաթափանց՝ թագուն
 գանձեր չմնացին : Ամեն կողմէ կը դիմէին իւր լոյսե-
 բուն, ի մասնաւորի Ս. Գրոց և աստուածաբանութեան
 նրբին դժուարիմաց խնդիրներու մէջ : Իւր լուծումներն
 անդորրութիւն կը պարգեւէին խիղճերու . ամեն ոք
 համոզուած ըլլալով թէ իւր գիտասէր հոգին չէր շա-
 տանար երբեք վարկպարազի ուսումնասիրութիւննե-
 րով : Ինչպի՛սի խղճամիտ խնամքով կը պատրաստէր
 նաև իւր դասախօսութիւնները Բալիեսիայի Համալ-
 սարանին, ուր ընտրուած էր ուսուցիչ Աստուածաշունչ
 Մատենից : Խոնարհ աղօթիւք կը խնդրէր օգնութիւնն
 Անոր որ մինչ կը կուրցնէ հպարտները, լոյս և շնորհք
 կը սփռէ խոնարհներու վրայ :

Օգմայի եպիսկոպոսը, որոյ թեմին կը պատկանէր
 Գոմինիկոս, իւր կանոնիկոսաց ժողովը տեսակ մը կրօ-

նաւորութեան վերածած էր, որում անդամակցելով հաճոյք պիտի պատճառէր իւր Առաջնորդին: Սոյն բաղձանքը իբրև երկնից հրամանն ընդունեց, և քսանեւհինգամեայ կրօնաւորի զգեստն առաւ, սպիտակ պարեգօտ ու սև վերարկու: Սպիտակը խորհրդանշան անմեղութեան, ու սևը՝ սգոյ և ապաշխարութեան: Համազգե՛ստ սխրալի զոր պիտի տայ մի օր իւր հոգեւոր որդւոց և դստերաց, և որ ցարդ աւելի քան եօթն դարեր աշխարհի շրջանն է ըրած, ամենուրեք սփռելով մաքրութիւն և ոգի ապաշխարութեան, և հոգիները բարձրացնելով երկնատենչ փառասիրութեանց և ամենէն վսեմ իտէալներու:

Այս նոր կեանքը նոր գրգիռ մը եղաւ՝ ներքին առաքինութիւններն ինչպէս և առաքելաջան աշխատութիւնները բազմապատկելու, որոցմէ կաթողիկէներ, թերահաւատներ, հերձուածողներ, ամենքն ալ կ'օգտուէին մեծապէս: Քանիցս ուղեցին եպիսկոպոս ընել զայն, մերժեց միշտ նոյն պատասխանը տալով. «*Non me misit Dominus episcopare, sed praedcare*. Զիս չղկեց Տէրը եպիսկոպոսանալու, այլ փարգելու»:

Առաջնորդք տեսնելով անոր գերազանցօրէն արգիւնալից գործունէութիւնը, ամենէն կարեւոր պաշտօնները կը յանձնէր, վստահ լինելով թէ արգելքներն իսկ միջոցներու պիտի փոխուէին այն անզուգահան Առաքելին համար: Այսպէս անգամ մը ծովեզերքը քարողած ժամանակ, ոչ-քրիստոնեայ ծովահէններ զինքը գերի բռնեցին: Հազիւ թէ նաւը կը մտնէ, ճաստկաշունչ մրրիկ մը կը ծագի սպառնալից, ծովահէնք կը վախնան՝ իբրև աստուածասաստ պատիժէ մը, քրիստոնէութիւնը կ'ընդունին, և Ս. Դոմինիկոսի աղօթքը կը հանդարտեցնէ իսկոյն կատաղի ալիքները ծովուն:

Դառնալով իւր քարոզութեանց ի Գասդիլլա և յԱրակոն, բազմաթիւ հրաշքներ ու դարձեր ըրաւ Հըրեշտակաց Թագուհւոյն ջերմեռանդութեամբն: Ալֆոնս Գասդիլլայի թագաւորը բոլորովին փոխեց իւր վարքը, դիմելով Ս. Աստուածածնի հզօր պաշտպանութեան: Ուրիշ Ալֆոնս մը թագաւոր Լէոնի և Կալիցիոյ, իւր ոճիրներով արժանի եղած էր յաւիտենական դատապարտութեան. բայց խոստանալով հաւատարիմ մնալ Ս. Աստուածածնի ջերմեռանդութեան, քաւեց ու դարմանեց իւր յանցանքները, և ապրեցաւ իբրև բարի քրիստոնեայ: Դեռ քանի՛նք որոնք իրենց վարուց ուղղութիւնը կ'ապահովէին այս քաղցր ջերմեռանդութեամբ, որ արդարև նշման մ'է նախասահմանութեան:

Տիեկոյ տէ Ազէվէտոյ եպիսկոպոսը թաղաւորին հրամանաւ և կարեւոր դեսպանութեամբ մը՝ երբ Յըրանսա կ'երթար, ուզեց հետն առնուլ Դոմինիկոսը: Դուրուզի մէջ խորին վիշա մը զգացին՝ տեսնելով անուի չարիքը զոր Ալբրիկեան հերետիկոսները կը գործէին հոն, տարածելով լիաբուռն իրենց թոյնը մահաբեր: Նախախնամական տրամադրութեամբ մը իրենք իսկ հիւր եղած էին անոնցմէ միոյն բնակարանը: Սուրբը զօրաւոր փաստերով և հոգելից յորդորներով յաջողեցաւ դարձի բերել այդ մոլորեալ ոչխարը. ինչ որ խրախոյս մը եղաւ իրեն պայքարելու քաջութեամբ՝ այդ աղիտաբեր հոգեկորոյս մոլորութեան դէմ: Այսպիսի առաքելութեան մը մեծամեծ օգուտները կանխատեսելով, երբ Հռոմ գացին, եպիսկոպոսը խնդրեց իննովկենախո Գ. մեծանուն և մեծագործ Հայրապետէն ընդունիլ իւր հրաժարականը, և բոլորանուէր մարտնչիլ ընդդէմ հերետութեան և անհաւատութեան: Սակայն Եկեղեցւոյ

Գերագոյն Պետը չուզեց զրկել կարեւոր թեմ մը այն-
քան բարեմասնութիւններով օժտեալ առաջնորդէ մը,
հաւանեցաւ միայն որ երկու տարի մնայ ի Լանկտոզ,
ուղղափառ Հաւատոյ ի պաշտպանութիւն, իւր երեք
պատուիրակներուն հետ, որ են Առնօ, Արքայ Սիդօյի,
Պետրոս տը Գասդէլնօ, և Ռոտոլֆ, կրօնաւոր Ֆրուատ-
ֆոնի: Մեկնելով ուրեմն Հռոմէն, եկան ի Մօնրելիէ,
ուր ժողովուած էին Քահանայապետին ներկայացու-
ցիչները, որոնք ամեն ջանք ի գործ դրած էին արդէն
հոգեւորան մոլորութիւնը նուաճելու համար. բայց ար-
դիւնքն հեռի էր տակաւին բոլորովին գոհացուցիչ լի-
նելէ: Ուստի կը խորհէին թէ անհրաժեշտ էր գտնել
աւելի ազդու միջոցներ: Ս. Դոմինիկոս ի խնդիր այս
միջոցներուն՝ զիմեց աղօթքի: Աստուած որ կը լսէ
խոնարհներու և մաքուր սրտերու աղերսանքն, իմա-
ցուց թէ սուրբ նպատակին յաջողութեան համար հարկ
էր նմանիլ Առաքելոց կեանքին, ճամբորդել հետիոտն,
առանց պերճանքի, առանց դրամոյ, առանց պաշարի,
և կատարեալ անձնալքումով աստուածային Նախախ-
նամութեան: Քարոզութիւնը պէտք էր ըլլալ աւելի
օրինակով քան խօսքով, և այդու ըմբերանել եկեղեց-
ւոյ թշնամիները, որոնք կը պարծենային իրենց իրա-
կան կամ կեղծ աղքատութեամբ և պարզութեամբ:
Սուրբը այս ներշնչութիւնները հաղորդեց եպիսկոպոս-
սին, որ Սիւնհոգոսի մէջ պարզեց զանոնք: Նախ հա-
մամիտ չգտնուեցան Սիւնհոգականք, առաջարկուած
միջոցները ծայրայեղ գտնելով: Բայց եպիսկոպոսը և
Դոմինիկոս պատասխանեցին ամէն առարկութեանց,
և առաջարկեցին որ նախ իրենք սկսին այս առաքե-
լական անձնանուիրումն ու անձնուրացութիւնը, և
Սպանիա վերադարձուցին ծառայները, արդուզարդերը,

և ամեն ինչ որ կը ծառայէր հանգստաւէտ, փափկասուն կենցաղի և ցուցամոլութեան կամ անձնասիրութեան: Եւ սկսան քարոզել Աւետարանի ճշարտութիւններն անվեհեր համարձակութեամբ, և յուզիչ պերճախօսութեամբ որ բարի օրինակէն միայն կը բղխի: Պտուղներն արտաքոյ կարգի առատ եղան. ուր որ կը քարոզէին այս եռանդուն Առաքեալները, ժողովուրդը կերպարանափոխ կ'ըլլար: Ճշմարտութեան յաղթանակը դուն ուրեք եղած է աւելի փառաւոր: Նորագարձները քաջութիւնը միացնելով անկեղծութեան և ճշմարտասիրութեան, վտարեցին իրենց մէջէն գլխաւոր հերետիկոսները, որ կը կոչուէին Պոլտուին և Թիէրի:

Գ.

Սիդոյի արբահայրը վանական գործոց պատճառաւ մեկնած էր, Երանելին Պետրոս տը Գասզէնօ թշնամիներէն անգթօրէն չարչարուած, անկարող կը զգար ինքզինք աշխատելու: Հետեւարար առաքելութեան ամբողջ բեռը կը ծանրանար Ազէվէտոյի, մոտոլֆի և Դոմինիկոսի ուսերուն վրայ: Աղանդաւորաց զէնքերն չին գիրքեր յօրինուած՝ Աստուծոյ և Սրբոց դէմ լի հայհոյութեամբ, նախատանօք և զրպարտութիւններով — ինչպէս միշտ և ամենուրեք, — որոց կը պատասխանէր Դոմինիկոս բերանացի և գրաւոր: Այնչափ զօրաւոր և ջախջախիչ էին ապացոյցներն, որ մազիւ չափ տրամաբանութիւն և ուղղամտութիւն ունեցող անձ մը պիտի չփտէր հերքելու ձեռնարկել: Սուրբին գրութիւնը խնդրեցին՝ լրջօրէն և հանդարտ գլխով պատասխանելու պատրուակաւ: Ստատանին՝ որ հայրն է հերետիկոսութեանց՝ բոլոր նրբամտութեամբն ու նին.

գութեամբ քննեցին զայն, որ իրենց իսկ անժխտելի թուեցաւ: Ուստի որոշեցին միաձայնութեամբ որ կրակը նետուի այն, և եթէ չայրէր, ա՛լ ընդունէին թէ հոն էր լաւագոյն վարդապետութիւնը: Բոցերու մէջ նետուեցաւ և անվթար մնաց, ու երկրորդ հրաշք մը եւս վրան աւելնալով բոցերը զայն դուրս նետեցին, առանց իսկ գիր մը աւերելու: Բայց այս ըրիտ խստասիրտները չուզեցին տեղի տալ, և երկրորդ ու երրորդ անգամ մ'ալ կրակի մատնեցին զայն, կարծես ուզելով բանալ մրցում մը չարութեան ընդդէմ աստուածային բարութեան և ամենակարողութեան: Այսպիսի յամառութիւն մը կը նշանակէր, ակոս՝ ստորագրել իրենց յաւիտենական դատապարտութիւնը, ըստ որում աստուածաբանից վճիռ է. «*Si miraculum non couvertit, condemnat.*» Եթէ հրաշքը դարձի չի բերեր զմեզ, կը դատապարտէ: Այս աստիճան ատելութիւն բարւոյն և ճշմարտին կրնայ ումանց անհաւատալի իսկ թուիլ, բայց ո՛չ առաջինն է և ո՛չ վերջինը մարդկային վրիպանաց և ոճիրներու պատմութեան մէջ, Գողգոթայի և Փարիսիցեաց օրերէն մինչև Լուրտի և Էմիլ Զոլայի զէպքերը: Այս հրաշքը պատահեցաւ ի Մոնրէալ, ինչպէս կը յայտարարէ Պետրոս տէ վ.օ.աբ. Սեռնէ իւր Ալբիկեանց Պատմութեան մէջ:

Ի Ֆանժօ, Դուլուզի և Գարգանի միջև, Դոմինիկոս կրկին վիճաբանութիւն մ'ունեցաւ աղանդաւորաց հետ, որոնք հաւանօրէն չէին իմացած Մոնրէալի մէջ պատահածը, և առաջարկեցին երկու կողման զրուածներն ալ կրակը նետել՝ տեսնելու համար թէ ո՛վ էր ճշմարտութեան քարոզիչը: Սուրբը վստահ աստուածային գթութեան՝ յանուն կաթողիկէից ընդունեց այս առաջարկը: Երբեք բազմութիւն մը ժողովուեցաւ, դա-

տաւորներ որոշուեցան երկուստեք, մեծ խարոյկ մը վառուեցաւ, հերետիկոսին գրուածները մէջը նետուեցան, ու բոցերը զտնոնք անմիջապէս լափեցին: Դոմինիկոսի գրուածներն ալ նետուեցան հոն երեք անգամ, և երիցս բոցերը զանոնք ետ տուին առանց իսկ գիր մը ջնջելու: Սոյն նշանաւոր հրաշքին տեղւոյն վրայ շինուեցաւ յետոյ Դոմինիկեանց վանք մ'իյիշատակ և յերախտագիտութիւն աստուածային ամենակարող բարութեան:

Սաստիկ սովու մը ժամանակ ծնողք ունիք կը փորձուէին իրենց դուստրերը յանձնել հարուստ Ալքիկեանց, հաւատքի և յաւիտենական փրկութեան վտանգով: Սուրբը կ'ուզէր եթէ կարելի լինէր, ինքզինք վաճառել, և այդ զժբախտներուն օգնութեան հասնիլ: Աստուած, գոհ իւր սիրելւոյն զլուցազնական դիտաւորութենէն, ներշնչեց Նարպոնի և Դուլուզի եպիսկոպոսաց ինչպէս և ուրիշ բարեպաշտ ազնուականներու՝ իրենց սղորմութիւններով վանք մը հիմնել, ուր Դոմինիկոս ժողովեց բազմաթիւ օրիորդներ, և իմաստուն կանոններով նպաստեց ո՛չ միայն անոնց փրկութեան, այլև յառաջադիմութեան և սրբութեան: Փանժօյի մօտ Բուլլի համբաւաւոր վանքն է այս, հիմնուած 1207ին:

Այս թուականէն վերջ կը տեսնենք Օզմայի եպիսկոպոսը վախճանած սրբութեան անուշահոտութեամբ, երանելին Պետրոս տը Գասդէլնօ՝ հերետիկոսներու ձեռքով սպանուած, ուրիշ գործակիցք կամ մեռած կամ քաշուած ասպարէզէ, և առաքելութեան բեռը դրուած, գրեթէ միայն Դոմինիկոսի ուսերուն վրայ: Հակառակ օսոխներու արիւնառուչտ մոլեղնութեան, աներկիւզ համար ձակութեամբ կը շրջէր քաղաքէ քաղաք, գիւղէ գիւղ, բոկոտն, առանց դրամի, առանց մարդկային պաշտպա-

նութեան : վառուած մարտիրոսութեան տենչանօք՝ կ'արհամարհէր ամեն արգելք ու որոգայթ, իւր վսեմ հոգւոյն փառասիրութիւնն էր Աւետարանի լո՛յսը սրփոել, հոգիները բարոյական գերութենէ ազատե՛լ իւր կեանքին վտանգով :

Ալբրիկեանք բանավէճով և մտաւոր պայքարներով ևեթ չէին շատանար. հուրի և սուրի կը դիմէին բարբարոսօրէն, — ինչպէս կը աեոնուի շատ անգամներ մոլորութեանց տիուր պատմութեանը մէջ —, և քաղաքներու, գիւղերու խաղաղութիւնը կը վրդովէին, կրօնքի ստող և սրբապիղծ դիմակին ներքե : Օրինաւոր պաշտպանութեան պարագայ մ'էր կատողիկէից համար, որոնք ստիպուեցան զէնք առնուլ յապոհովութիւն իրենց կեանքին, պատուոյն և ազատութեան՝ ընդդէմ ամբարիշտ ու անօրէն յարձակմանց : Ի լուր գործուած ոճիրներու և երկնամարտ ապիրատութեանց Ֆրանսայի թագաւորն եւս պարտք համարեց Աստուծոյ և մարգկութեան թշնամիները զսպել զինու զօրութեամբ :

Այս ամենը անպատում արտմութեամբ կը յուզէին Գոմինիկոսի սիրտը, որ չէր կրնար անտարբեր դիտել ժամանակաւոր և յաւիտենական դժբախտութիւնները բիւրաւոր ժողովրդոց : Գերբնական միջոցներն անբաղդատելիօրէն գերազանց համարելով, կը յաւելուր իւր մահացմունքը, գիշերաջան տքնութիւնները, դընելով աւելի եռանդն ու կատարելութիւն իւր բոլոր աղօթից մէջ : Երկնային իմաստութեամբ լուսաւորեալ գիտէր թէ Ամենասուրբ Երրորդութեան առջև ամենակարող է բարեխօսութիւնն Աստուծոյ Մօր, ուստի և հեծութեամբ սրտի դիմեց՝ անոր մայրենի անսպառ գրթոյն, որպէս զի հաճի սորվեցնել իրեն ազգեցիկ մի-

ջոց մը չարիքը պակսեցնելու և կրօնքի պատիւը փրկելու : Օր մը երբ սուլճրականէն աւելի ջերմեռանդութեամբ կը պաղատէր, յորդահոս արցունք թափելով, Հրեշտակաց թագուհին երեւցաւ իրեն, և ըսաւ. «Ինչպէս որ հրեշտակային Ողջունատուութիւնն սկիզբն եղաւ աշխարհի փրկագործութեան, պէտք էր նաև որ այս ողջունատուութիւնը լինէր սկիզբն հերետիկոսաց դարձին, թէ այսպէս քարոզելով Վարդարանը որ կը բաղկանայ յիսուն Ողջոյն քեզ Մարիամե, պիտի տեսնէր հրաշալի յաջողութիւնն իւր աշխատութեանց, և այդ յամառ աղանդաւորք պիտի դառնային հազարներով :»

Տեղական աւանդութիւն մը կը կարծէ թէ Տրէշի Տիրամօր սրբավայրին մէջ տեղի ունեցաւ այս տեսիլքը, բայց աւելի հաւանականը Բոույլի մատուռն է :

Դոմինիկոս հնազանդեցաւ այս ձայնին, և թողլով վիճաբանութիւնները, ինքզինք նուիրեց Վարդարանը քարոզելու, անոր 15 խորհուրդները բացատրելու, և Անարատ Կուսին արժանիքն ու մեծութիւններն հռչակելու : Անհաշուելի էին այն քարոզութեան պտուղները. քիչ ժամանակի մէջ յաջողեցաւ աւելի քան 100,000 տնձեր ազատել զժոխքէն, հեռացնելով զանոնք աստուածամարտ մոլորութիւններէ : Այսպէս սկսած է ամենօրհնեալ Վարդարանի ջերմեռանդութիւնն որ եղած է ցայսօր և պիտի մնայ ցվերջ աշխարհի Կաթողիկէ Եկեղեցւոյ մեծագոյն գանձերէն և երկնաճոխ հարստութիւններէն մին :

Դ.

Երբ Սիմոն տը Մոնֆօր, այս քաջարի զօրապետը նոր խաչակրութեան մը գլուխ անցնելով՝ Դուլուզի չարագործներու բռնաբարութիւնները կը ջատկէր

զսպել, Դոմինիկոս անգնահատելի ծառայութիւն մատոյց՝ ամբողջ բանակը բարեպաշտութեան յորդորելով, և Ս. Խորհուրդները պատշաճօրէն ընդունելու պատրաստելով զամենքը: Երկինք յայտնապէս իրեն հետ էր, ո՛չ միայն մեղքի դէմ կը կոուէր յաղթականօրէն, այլ և ամէն մի քայլ նշանք և սքանչելիք կը բղխէին իրմէ՝ ի մխիթարութիւն հաւատացելոց և ի հաստատութիւն ուղղափառ Կրօնի:

Հակառակ իրենց բարի կամեցողութեան, իւր գործակիցք յարատև վտանգներէ և հալածանքներէ յոգնած, չէին յօժարեր կրկէսին մէջ մնալ ցվերջ: Ամենէն գործնականն էր ունենալ աշակերտներ ուխտերով կապուած, որոց յարատևութիւնը պիտի ապահովէր սկսուած բարեգործութեանց տեւականութիւնը: Այս դիտաւորութեամբ եկաւ ի Հոռոմ, և խօսեցաւ Իննովկենտիոս Գ.ի, որ ի սկզբան չհաւանեցաւ նոր Միաբանութեան մը հիմնարկութեան: Բայց գիշեր մը խորհրդաւոր երազ մը տեսաւ. Լատերանեան Ս. Յովհաննու Մայր-Եկեղեցին էր որ կիսակործան՝ կը հանգչէր Դոմինիկոսի և Փրանկիսկոս Ա.սիգացւոյն ուսերուն վրայ. ընդդիմութիւնը դադրեցուց, և կոչելով իւր ներկայութեան ապագայ հիմնադիրը, քաջալերեց իմաստուն խորհուրդներով: Բայց Քահանայապետը վախճանելով 1216 Յուլիս 15ին, սուրբը հարկադրուեցաւ սպասել լաւագոյն օրերու ստանալու համար յաջորդին Հոնորիոս Գ.ի պաշտօնական հրամանագիրը: Չվհատեցաւ, և ի գործ դրաւ վեհանձնօրէն ամեն ինչ որ կրնար՝ հաճոյ լինելու համար երկնից, և փութացնելու բեղմնաւոր ժամը Նախախնամութեան՝ յիշելով անշուշտ յուսատու վճիռը մարգարէին. «Քաղցր է Տէր որոց սպասեն նմա յաւուր նեղութեան» (Նաում, Ա. 7.):

Երբ օր մը կ'ազօթէր աշխարհի ամենէն հայտկերտ սքանչելարուեստ Եկեղեցւոյն մէջ, մտքի վերացում (extase) մը ունեցաւ: «Տէրն մեր իւր փառաց մէջ, նստած գահու վրայ, երեք նիզակներ ի ձեռին, կը թըւէր ընդհուպ խոցել բոլոր մարդիկ և շանթահարել երկիրն համայն: Ս. Կոյսը նետուեցաւ անոր ոտքերուն, ազաչելով դադրեցնել իւր բարկութիւնը և ներել անոնց զորս փրկած էր իւր անգին արեամբ: Եւ որովհետեւ Դատաւորը զայրացած՝ կ'ըսէր թէ մարդոց ուճիրներն այնպէսի ծայրայեղութեան հասած էին որ չէր կրնար չպատժել այլիւս անհնարին խստութեամբ: Մայրը ներկայացուց Որդւոյն իւր ծառայներէն երկու հոգի, Դոմինիկոս և Փրանկիսկոս Ասիզացի, վստահեցընելով թէ Աւետարանի այս հաւատարիմ պաշտօնէից քարոզութեամբ, և իրենց ու իրենց որդւոց բարի օրինակներով՝ այնպիսի երջանիկ փոփոխութիւն մը պիտի յառաջ գար մարդոց բարքերուն մէջ, որ իւր արդարութիւնը պիտի կրնար գոհ ըլլալ: Ինչ որ ձգել տուաւ ձեռքի նիզակները, և զայն խաղաղեցուց կատարելապէս:»

Երկնային ուրախութեամբ լեցուած, անգամ մը եւս համոզուեցաւ թէ իւր ձեռնարկը պիտի վայելէր մեծ օրհնութիւններ, և թէ իւր որդիք միացած Փրանկիսկոսի որդւոց հետ պիտի հանդիսանային աշխարհի ճշմարիտ բարեկարգիչները, և զքրիստոնէութիւն պիտի փայլեցնէին սերովբէական սիրով և ամենազգի դիւցազնութեամբք: Թէ իրականութիւնն ի'նչպէս համապատասխանեց այս խտէալին՝ թո՛ղ խօսի այդ պանծալի Միաբանութեանց պատմութիւնն աւելի քան եօթն անգամ դարաւոր:

Հայր Հենրիկոս. Դոմինիկ Լագոռտէրի գրիչն ոսկե-

դէն՝ երկու խօսքի մէջ բիւրեղացուցած է անոնց ծընունդն անմահ. «Յիսուս Քրիստոս նայեցաւ իւր մեզ համար խոցուած ոտքերուն և ձեռքերուն, և այս նայուածքէն ծնան երկու մարդիկ, Ս. Դոմինիկոս և Ս. Փրանկիսկոս Ասիզացի:»^(*)

Նոր Միաբանութիւնը պաշտօնապէս հաստատուեցաւ Ս. Աթոռոյ կողմանէ 1216 դեկտ. 22ին, Քարոզիչ Եղբարց անուամբ: Այնուհետև Դոմինիկոսի գլխաւոր հոգն եղաւ ոչինչ խնայել, ընելու համար իւր որդիներն հոգելից անձեր, ճշմարիտ կրօնաւորներ և ընտիր քարոզիչներ: Գիտութիւնն անհրաժեշտ ըլլալով կրօնի պաշտօնէից, իւր քաղցրագոյն հաճոյքներէն եղաւ տեսնել անոր մէջ սրբազան գիտութեանց և գրականութեան ճաշակը:

Բաց ի հոգևով մեռեալներէ զոր սուրբը կը յարուցանէր մեղաց գերեզմանէն, Հռոմի մէջ միայն՝ երեք մեռեալներու յարութիւն պարգեւեց: Ականատես վկայներուն մէջ՝ բաց ի ժողովուրդէն՝ կան բարձրաստիճան անձինք, և նոյն իսկ ծիրանաւորներ: Սակայն չարերն ալ կը պատժուէին Աստուծոյ արդարութենէն. այսպէս ի Բարիզ Վարդարանի առաջին խորհուրդը մեկնած ժամանակ, գունդագունդ բազմութիւն մտիկ կ'ընէր երկիւղած հիացմամբ: Չորս լիրբ իմաստակներ, ինքզինքնին անշուշտ մտաւոր արծիւներ կարծելով, կը ծաղրաբանէին. քարոզիչը մարգարէական հոգևով գոչեց. «Իմ ունկնդիրներէս անոնք որ դարձի գալ չեն ուզեր, վաղը երեկոյ մեռած պիտի ըլլան:» Արդարև հետեւեալ օրը երկու առ երկու կոռուելով, չորսն ալ չարաչար սպաննուեցան: Երկինք երկրի միացաւ պանծացնելու համար այս մեծ կուսակրօնն:

(*) Vie de S. Dominique, par le T. R. P. Lacordaire:

Ինչպէ՞ս կարելի էր որ քաղաքակիրթ մարդկու-
թիւնը չփառաւորէր զայն : Աւետարանական բոլոր ա-
ռաքինութիւնք փայլեցան իւր վրայ գերագոյն աստի-
ճանով : Այնչափ անկեղծ ու խորին էր իւր խոնար-
հութիւնն որ ո՛չ միայն կը խորշէր ամէն տեսակ սչա-
տիւէ ու տիտղոսներէ, այլ նաև ուրախութիւն կը
գտնէր նախատինքի և արհամարհանքի մէջ : Երբ կ'եր-
թար քարոզելու, այնինչ կը նշմարէր հեռուէն գիւղը
կամ քաղաքը, ի ծունր իջնելով գետինը կը համբու-
րէր, և կ'ըսէր հոգւոյն բոլոր անկեղծութեամբ. «Ինձ
նման ապերախտ ու անարգ մեղաւոր մը հոս մտնե-
լուն համար, չըլլա՞յ, Աստուած իմ, որ պատժուի խեղճ
ժողովուրդը :»

Անսահման էր իւր սէրն Աստուծոյ և ընկերին.
ամէն ինչ կը սկսէր, կը շարունակէր, կը վերջացնէր
սիրով : Իր կեանքն ամբողջ անձնուրացութեան, կամա-
ւոր չարչարանաց հրաշալիք մը եղաւ, որովհետև սէրը
կը զիւրացնէր իրեն՝ ամենէն դժուարին և տաժանելի
իրերը :

Եւ ի՞նչպէս չզմայլիլ իւր սիրոյն առ Ս. Աստուա-
ծածին՝ ցարդ ըսուածներն ու ըսուելիքներ ոչինչ են
իրականութեան առջև, զոր հրեշտակի մը գրիչը կրը-
նայ նկարագրել ըստ արժանւոյն : Այսպէս եղած է
միշտ և պիտի ըլլայ ճշարիտ սուրբերու համար. ո՞վ
կրնայ չափել սէրը Բոնավենդուրաներու, Նարեկացիներ-
րու, Ծնորհալիներու, Հերման-Յովսէփներու, Յովսէփ
կոպերտինեաններու, Բեռնարդոսներու, Թերեզաներու,
Մարիամ ա'Ակրեստաներու և այլոց բազմաց :

Չէր յագեհնար երբեք օրհնելէ օգոստոսափառ Տիրու-
հին երկնի և երկրի, երբեք չէր քարոզէր առանց հըռ-
չակելու անոր գթութեան և «պաղատագին ամենակա-

բողոքեան» սքանչելիքներն իւր երջանկութիւնը պիտի ըլլար արիւնը թափել ի պաշտպանութիւն անոր փառաց և առանձնաշնորհմանց: Վարդարանի եղբայրութեան ընդունելով 4—5 միլիոն անդամներ, նոյն չափով աւելցուց անոր ծառայներու թիւը: «Գեղեցիկ Սիբոյ Մայրն» ալ կը փոխարինէր իրեն՝ արժանի եղանակաւ: Ի՞նչ գերազանց շնորհքներ ընդունեց Փրկչին կենարար Սրտէն՝ իւր սիրելոյն հոգին եւս աւելի օժտելու և գեղեցկացնելու համար: Որչա՛փ անգամներ օգնեց անոր տագնտպալից ժամերու մէջ, ուր մարդկօրէն օժանդակութիւն անկարելի կը թուէր: Որչափ անգամներ պահեց ու պահպանեց թշնամեաց որոգայթներէն: Որչա՛փ անգամներ իւր կուսական օտից ներքև փչրեց խորտակեց սկզբնաչար բանսարկուին դարանները դժոխային: Քանի՛ քանի՛ անգամներ հրաշիւք և տեսիլքներով յայտնեց իւր գերագոյն մտերմութիւնն անոր անձին կամ որդոց, այս վերջինները ցոյց տալով գուրգուրանօք ժողովուած իւր արքայաչուք վերարկուին ներքև, իբր առհաւատչեայ իւր մայրենի անեզր գորովանաց:

Գերբնական Հաւատոյ մաքրութիւնը պէտք է ունենալ հասկնալու համար իւր զայրոյթն ընդդէմ մոլորութեանց: Նոր Փարիսեցիք գուցէ գայթակղին իրմէ, բայց ի՞նչ փոյթ... հիւները միթէ չգայթակղեցա՞ն Յիսուսէ: Այնչափ բուռն էր Դէմինիկոսի ատելութիւն ընդդէմ հերետութեան որչափ մեծ էր նախանձն հոգիներու փրկութեան, վասն զի հերետիկոսութիւնն էսպէս հոգեսպան է: Դժոխոց դռները կը բանայ լայնօրէն ո՛չ անհատից առջևեւեթ, այլ և ժողովրդոց և տէրութեանց, և այս, ափսո՛ս, դարերու տեւողութեամբ յաճախ:

Մօտ էր ժամն յորում վսեմ առաքեալը պիտի թողուր մեղաց ու թշուառութեանց այս տխուր աշխարհը : Հրեշտակ մը գալով աւետեց այս լուրը , զոր սուրբը ընդունեց անպատմելի ցնծութեամբ և մխիթարութեամբ : Ընդհանրական խոստովանանքը կատարելէ վերջ , փափագեցաւ ընդունիլ Ս . Հաղորդութեան և վերջին Օծման խորհուրդները : Երբ իւր հայրական խրատներն աւետեց իւր որդւոց , լի օծութեամբ և գերբնական հոգւով , որ արցունք կը խլէին բոլոր աչքերէ , դարձաւ առ խաչելեալն Յիսուս և առ Ս . Աստուածածին , անոնց յանձնելով իւր ներկայ ու ապագայ աշակերտներն : Իւր երկրպագելի Փրկիչը և Կուսամայրն՝ երկնային զօրաց գունդերով եկան ընդ առաջ , երբ քահանայն կը կարդար մահամերձի աղօթքն»

Իւր ձեռներն ու աչքեր վերցնելով դէպի երկինք , սրովբէաչունչ սիրով բոցավառ՝ աւանդեց իւր ամբիծ հոգին , վայելելու համագ երանութիւնն որ սկիզբ ունի , բայց ո՛չ երբեք վախճան : Ուրբաթ օր մ'էր , 6 օգոստոսի 1221 , յիսուն տարեկան հասակի մէջ :

Ե.

Նկարագրով էր զուարթամիտ և հեղահամբոյր , սրտիւ զգայուն , դէմքով գեղեցիկ , միջանասակ , թեթեւօրէն կարմրայտ , աչքերը գրաւիչ , ձայնը ներդաշնակ , ազնուաշեշտ և հնչուն : Մաղերը պահած էր ամբողջապէս , որոց մէջ կ'երեւէին սակաւաթիւ ճերմակներ : Աղօթասիրութիւնը իւր տիրող առաքինութիւնն եղաւ . և իւր հրեշտակային քաղցրութեամբ աւելի խանդավառեց ամբոխները քան իւր հրաշքներով : Իւր ներկայութիւնն երկնային էակի մը ազդեցութիւնը կը

գործէր հոգիներու վրայ, երբ մեզաց ու մուրուրեթեան բուրբուրին գերի եղած չէին անոնք:

Իր մահուանէ քիչ վերջ Բարոզչած Կարգը տարածուեցաւ արագօրէն ամէն կողմ: Եղաւ ժամանակ յորում միայն Նարոյի մէջ ունեցան 18 վանք այրերու և 10 վանք հաւատաւոր կուսանաց: Եթովպոյ վանքերէն մին կը պարունակէր 9000 քահանայ և 3000 աշխատաւոր եղբայրներ: Արեւմուտքէն արեւելք, հիւսիսէն հարաւ լսուեցան այս հրալեզու առաքեալները, և անոնց ամենէն նշանաւոր հեղինակներու գործերը թարգմանուեցան գրեթէ բոլոր քաղաքակիրթ լեզուներու: Եթէ տուած ըլլար մեզ Ս. Թովմոս Ա. քահանային միայն, քրիստոնէական աստուածաբանութեան իշխանն անհաւասարելի, խորհող մարգկութեան անմոռանալի և անհուն երախտագիտութեան արժանի եղած պիտի ըլլար արդէն: Բայց դեռ ո՛րքան ուրիշներ, որոնք փայլեցան հանճարով և սրբութեամբ. Մեծն Ս. Ալբերղոս, անհամեմատօրէն բեղմնաւոր, Վինչենցիոս Պովէի, որոյ ծովածաւալ հմտութիւնք կը զարմացնեն ամենէն գիտունները, Ս. Անտոնինոս, Փլորենաիոյ արքեպիսկոպոսը քաջածանօթ:

Ս. Վինչենցիոս Տէրէրեան, բմբասացներու ամենէն սքանչելագործը, և սքանչելագործներու ամենէն ճարտարախօսը, Նոէլ Ազեքսանդր և այլք բազումք:

Տասնեւիններորդ դարու մէջ, և քսաներորդի առաջին քառորդին, Փրանսայի ամենէն քաջահմուտ և պերճախօս քարոզիչներն եղան Ս. Դոմինիկոսի որդիները, Հենրիկոս Տիտոն, Յակոբոս-Մարիամ Մոնսապրէ, Էդուանօ, Յիլվիէ, Սերդիլանժ, Ժանվիէ, և հրաշալիքն արծուեթոռիչ պերճախօսութեան, Հայր Հենրիկոս-Դոմինիկ Լագուատէր, մրցակիցը Պոսիւէներու և Ոսկեբերաններու:

Ուխտը տուած է ցարդ 4 Պապ, 70 ծիրանաւոր, 160 արքեպիսկոպոս և գրեթէ 1000 եպիսկոպոս: Բազմաթիւ են նաև մարտիրոսք, ու պաշտօնապէս ընկալեալ Սուրբ ու երանելիք: Բաց ի վերոյիշեալներէ՝ գլխաւորներն են Ս. Պետրոս Վերոնայի, Ս. Լուդովիկոս Պերդրանտոյ, Ս. Ռէմոն տը Բեննաֆոր, Ս. Սեբաստիանոս Վալֆրէ, Երանելի Բարթողիմէոս Սրբոյն Դոմինիկոսի, Երանելի Փրանկիսկոս Բոզատայ, Երանելի Ալէն տըլա Ռոշ, և Սրբուհիներն են Կատարինէ Սենացի, Իմէլտա, Վարդուհի Լիմացի, Կատարինէ Ռիչչի և այլք: (*)

Եկեղեցւոյ թշնամիք հաւատաքննութեան խնդիրը զէնք են ըրած՝ առանց մտածելու թէ այդպիսի ատեանի մը հաստատութիւնը եղած է ո՛չ Դոմինիկեանց, այլ Գերագոյն Իշխանութեան ձեռք, ժողովուրդներն անպաշտպան չթողլու համար չարազանդներու առջև, և թումբ կանգնելու այն սրբապիղծ յանդգնութեան դէմ, որ կրօնքը պատրուակ մը կ'ընէ իւր կրից կամ շահուց: Զրպարտիչները չեն պատկառած ո՛չ իսկ սուրբերու հրեշտակային դէմքէն, և իրենց թոյնը ժայթքած են յաջ և յահեակ: Պատմութիւնը փոխանակ լինելու դպրոց մ'իմաստութեան՝ եղած է անոնց ձեռքը

(*) Լուրջ ընթերցողներու կը յանձնարարենք կարդալ Հ. Տիտոնի հետեւեալ գործերը. «La Foi et la Science» որ շատ մը նախապաշարուներ կը ջնջէ, եւ յանուն լուսաւորութեան շատախօսող խաւարասէր չղջիկներու խորհիլ կը սորվեցնէ: Կը յանձնարարենք մանաւանդ «Jésus-Christ», որ գլուխ-գործոց մ'է կուռ եւ ժուժկալ ոճոյ, ինչպէս եւ անկողմնակալ եւ առողջ գիտութեան. մին այն յաղթական պատասխաններէն որք տրուած են հին եւ նոր անհաւատներու, գիտութեան եւ քննադատութեան դիմակին տակ՝ ստութիւն եւ իմաստակութիւն տարածողներու, Կեղսոսէ եւ Պորփիրէ մինչեւ Սդրաուս եւ Էռնէսդ Ռընան:

գողցես հանք մ'անսպառ ուրկէ առատօրէն կը քաղեն սուտ և զրախօսութիւն: Եւ այդու իրաւունք աուած են վսեմ մտքի մը, Յովսէփ տը Մէսդրի՝ գրելու «Պատմութիւնը դարերէ ի վեր մեզանքու դաւանանութիւն մ'է հեմարտութեան դէմ»:»

Հագոռաէր իւր հոգեւոր Հօր կենսագրութիւնը կը վերջացնէ այս գեղեցիկ խօսքերով. «Այսպէս եղաւ կեանքը, մահը և յաւիտենական փառաւորութիւնը միոյն մարդոցմէ՝ ամենէն ձեռներէցն հանճարով, ամենէն գորովալիրն սրտիւ, որ երբեք գոյութիւն ունեցած ըլլայ...: Շատեր ամեն ինչ կ'անգիտեն անոր մասին, բաց յայնմանէ թէ հաւատաքննութիւնը հնարեց և թէ Ալբիկեանց պատերազմին վարիչը եղաւ. երկու բաներ այնչափ կատարելապէս սխալ որ հետաքրքրական խնդիր մ'է մարդկային մտքի պատմութեան մէջ գիտնալ թէ ի'նչպէս հաւատալի եղան: Ջատագովութիւնը նախատինք մ'է, որուն պէտք չունի այս մեծ մարդը: Բաւ համարեցի գրել իւր կենաց դէպքերն այնպէս ինչպէս որ ժամանակակից յիշատակարանք մեզ մատուցին, և ամէն վիճաբանութեան փոխարէն կ'ամրանամ սոյն անպարտելի յիշատակարաններու ետեւը: Ո՛վ որ պիտի խօսի Ս. Գոմինիկոսի մասին այլապէս քան զոր ըրի ես, պիտի խնդրեմ իրմէ տող մը ժ.Գ.րդ դարէն, և եթէ չափազանց բազմապահանջ գտնէ զիս, պիտի շատանամ մէկ բառով միայն»:»


Խօսքեր որոց վրայ կ'արժէ որ խորհինք, եթէ չենք ուզեր անարգ կեղծարարներու զոհերն ըլլալ, և եթէ ազնուօրէն փառասէր ենք մեր միտքը սնուցանելու ճշմարիտ գիտութեամբ և անկողմնակալ քննադատութեամբ:

31 Մայիս 1934

Ի Տօնի Աստուածամօր
Սուրբ Սրտին Յիսուսի



ՀՈԳԵԻՈՐ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՀԱԻԱՆՈՒԹԵԱՄԲ



İBB Eyüp Sultan Halk ve Çocuk Kütüphanesi



ERM0623

255.07.02.01.06.00/

